

թեամբ աշխատել է ապացուցանել, որ նախ՝ Յովհան Կողեսնի տեսիլը մի կեղծագրութիւն (արօցրի) է, որ զրուած է ԺԲ. դարումն և ըստ ամենայն հաւանականութեան Առ լեռան հայ մենաստաններից մէկում: ԱԿԴ թուի խաչակրաց պատերազմի շուտափոյթ և յաջող ելքի յուսով՝ որ և ի գերեւ չելաւ. երկրորդ՝ որ Մատմէսս Ուռհայեցին, որի պատմութիւնը հանումէ մինչև 1136 թ., դրել է իւր պատմական երկը 1147 թուից յետոյ և այն ել բաւական ժամանակ յետոյ, որովհետեւ այդ ժամանակը տեսիլն արդէն յաւելուածներով հարստացած է: Ա.Հ. ևս ճգնել է ապացուցանել, որ Ուռհայեցին առանձին նպաստաւոր հանգամանքների մէջ է եղել այդ տեսլեան հետ ծանօթանայու վերաբերմամբ վերջապէս, որ նա ծանօթ է եղել անշուշտ այս տեսլեան, ևթէ մինչև իսկ ենթադրելու լինինք որ այդ տեսիլը մի այլ որ Ուռհայեցուց յետոյ է աւելացրել նրա ձեռագրի մէջ:

Աեղծագրութիւնների և մասնաւորաբար տեսպիների հետքերը մեր պատմական գրականութեան մէջ առանձին ուշագրութեան արժանի են, ուստի առթից օգտուելով յիշենք այս տեղ Ս. Էջմիածնի ձեռագրատան մէջ Յովհաննէս Կողեսնի առուամբ ծանօթ «Հացունեաց խաչի» պատմութիւնը. Զեռադրատանս այդ զրչագրի նիւթոց ցանկի մէջ զրտնելով Յովհաննէս Կողեսնի «պատմութեան» յիշատակութիւնը, մեր որոնածի փոխարէն գտանք միայն մի զլուխ հետևեալ մակագրութեամբ. «Պատմութիւն: Յաղագս սրբոյ խաչն. Որ հացունեացն կոչ. Եւ թէ որպէս դարձաւ ի պարսից աշխարհէն խաչն աստուածնեկալ: Եւ յայն ժամ մասն լնկաւեալ տիկնոջն Սիւնեաց: Վերնագրից յետոյ գլուխը սկսուում է. ևն եղեւ յետ թագաւորելոյն Մարեկայ. . . . Այստեղ լեգենդական ձեռվ պատմուած է Խոսրովի ձեռքով ազատուելն և դրանից մի կտոր Սիւնեաց տիկնոջ լնծայուիլն: Յաջորդաբար սրան կից պատմուած է Նրուսաղմի առումն մահմետականների ձեռքով: յունաց Լեռն կացեր յաղթութիւնը իսլամների վրայ: Թէոդորոս Ռշտունու և Սահակ Զորափորեցու մասին ձիշը Պ.Առնդ պատմագրի խօսքերով և վերջապէս Թէոդորոսի որդի Վարդ պատրիկի մասին: Ամրոջ պատմութիւնն անպայման լեզնդական ձեւ ունի: Հարունակութեան մէջ ձեռագրում դատարկ տեղ է թողուած և պատհական պատմուած է Պետրոս Գետագարձի հրաշգրդութիւնն, ուր կայ և աղաւնու և արծուի գեղքը: Նշանաւոր է այն հանգամանքը, որ այս առանձութիւնը վերաբերում է Վասպուրակոն աշխարհին «Հուռ ի ծովն Բոլշտունեաց», ուր

Վարդ պատրիկը իրու 1000 եկեղեցիք է չինել տալիս, որոնց օրհնութեան հանդիսի համար ա. Ստեփանոսի նշխար է բերում մի ճգնաւոր երուաղեմից:

Արգեօք այս կեղծագրի վանական և ուշ ժամանակի յօրինուած լեզնդականներն են, որ յայտնի են եղել իրու պատմագրութիւն Յովհաննէս Կողեսն Տարօնացու անուամբ: թէ նա մի պատմութիւն ևս գրել է: ինչպէս աւանդում են նրա մասին: Ինձ ասացինն է հաւանական երևում:

Աջնաթին ՄԱՍՆԱԴԱՐԱՆ Ժ.Բ. Առ ծովու ոռւսական եղերբը: Քրեց Ա. Տիւրեան, եր. 190. 4. դինն է 2 փրանկ. Վիեննա 1895.

Ժ.Բ. Դ բ ա ն ս ի լ ո ւ ա ն ի ո յ Հ ա յ ո յ ց Մ ե տ ր ա պ ո լ ի ո ը կամ նկարագրի Կերպայ հայաբաղաբի ի գիր և ի պատկերու: Աշխատասիրեց Հ. Գրիգորիս վ. Գովրիկեան ի Մի. Ուստիւն. երես թ. +348. 4. 1896. Վիեննա. տպ. Միիմարեանց. գինն է 3 փր.

Վիեննայի Միիմարեան հարց բերան «Հանգես Ամօրեան» վաղուց է արդէն մասն առ մասն հրատարակում եր այս զրբերն իւր էջերուն մէջ: որ այս տարուան սկզբին աւարտուելով արդ իրու առանձին զրբունիներ ի վաճառ են հանուած: Ազգային կոչուող այս մատենագարանի Ժ.Բ. հատորը գործ է պ. Ա. Տիւրեանի: որ իրու զրօսաշրջիկի կոտորած է Ա. Տիւրեանի պատմա և ծովի ոռւսական եղերբներն և առթից օգտուելով Հաղորդել է իւր տպաւորութիւններն ու հաւաքած պատմահական տեղեկութիւնները: Այդտեղ կան աշխարհական վիճակագրական պատմական, առաջական պատմական, առեւտրական, ժողովրդագրական և ամենատեսակ տեղեկութիւններ, որ կարող են օգտաւէս լինել ամէն մի զրօսաշրջիկի և ուղեղորդի համար: Գիրքը նուիրուած է Վիեննայի Միիմարեանների ընդհանրական արբայ Հ. Արսէն Էյտըննեանի յիննամեաց քահանայական և ուսումնական գործունեութեան: Իրու տուրիստի յիշատական յաջող է կազմուած գիրքս, սակայն թէ ինչո՞ւ համար ազգային մատենագարանի համար է կազմում այդ հասկանալի չէ: երեսի նրա համար որ ազգային լեզուով է գրուած:

Յիրաւի ազգային մատենագարանի համար կազմելու արժանի է երկրորդ գիրքը, որ մեր ազգային լնդարձակածաւալ գաղթականութիւններից մէկի անցեալի և ներկայի պատկերն է: Այս գրքի հետ ծանօթացնելու և գիրքս մեր լնմերցողներին յանձնարարելու համար ամէնից լաւ միջոցն է զնել այստեղ նրա հեղինակի յառաջարանը: «Ընթերցողին առջև գուցէ շատ աչքի զարնող

բան պիտի երևնայ մատենիս ճակարին վրայ դրուած անունը:

Առ բանս ունի իր յատուկ պատճառն. ու չարկ է որ զայն մեր կողմանէ քիչ մը լուսաւորենք:

Դրանսիլուանից Հայոց շօրս զիխաւոր գաղթականութեանց ամենէն մեծը, քաղաքակիրթը, հարուստը, յառաջադէմն, ամենէն աւելի հայութեան ողի ու բնակիչ ունեցողը՝ Աերլա Հայաքաղաքն է:

Մետրապոլիս կը կոչէ այս քաղաքս հեղնութեամբ, հունգարական աղջը. ու նաև «Հայոց ըրուականուան» կ'անուանէ Տաղրաբանութեամբ Լատինական կղերը. Անտարակոյս անոր համար, վասն զի այս քաղքէն ելած են այլեայլ ատեն, այնպիսի աշխարհական ու եկեղեցական անձինքներ, որոնք զաղջն իրեն պատշաճ տեղը զետեղեւ ուղած՝ անոր իրաւունքները՝ եկեղեցական անկախութիւնը, պաշտպանած ու աղջը կլլել և իրենց մէջն ամփոփել ուղղողներուն դէմ մաքառած են, դործով, բանիւ և գրով:—

Պատմութիւն չէ, նկարագիր մըն է առաջիկայ մատեանս, անանկ քաղքի մը, որուն բնակիչները, ատեն մը բաղառաբար՝ իսկ հիմայ իր մեծ մասովն աղջային են. — քաղքի մը՝ որ յատկացեալ է Հայոց, որ Հայոցմէ հիմնած է. որուն յատակագիծը յօրինած է աղջային ճարտարապետ մը (Աւլքաննեան), որուն հիմնաբարը դրած է հայ եպիսկոպոս մը՝ (Արքարեան) ասկէ իրը երկու հարիւր տարի առաջ, 1700-ին:

Մտորագրութիւն մըն է մատեանս, հին ու նոր Հայաքաղքին արուեստաւորաց ու առետրական եղայրութեանց և հոգեոր լնկերութեանց, հրապարական շնորհարկութեանց, իւր մէջը գտնուած հրապարակական յիշատակարաններուն, եկեղեցական հանդիպութիւններուն. գարձեալ՝ ժողովրդական սովորութեանց, տեղական լեզուին, առասպելեաց, աղջային առակաց ու երգոց բեկորներուն՝ մնացրներուն . . .

Եւ ինչպէս որ մենք մեր բունէն՝ մեր կոճղէն անջատուած աղջայինքս, շատ հետաքրքրութեամբ կը լսենք, կը խօսինք ու կը կարդակի, մեր հին հայրենեաց, ինչպէս նաև Արևելք, Ռուսաստան և ուրիշ երկիրներն և տէրութեանց մէջ սփռուած Հայոց ու իրենց վերաբերեալ բաներուն վրայ, անանկ ալ կը համարինք, թէ այլ և այլ տեղերը գտնուած աղջայինք ալ, նոյն մատգրութեամբ ու հետաքրքրութեամբ կը կարդան, և այն սիրով տեղեկութիւն կ'առնուն, իրենցմէ անջատուած ու Դրանսիլուանից աղջայնոյմէ հաստատուած այս քաղքին գաղթականութեան պատկանեալ բաներուն վրայ:

Գրի առած ենք և մատենի ձև տուած ենք գործոցս, անոր համար, որ այն՝ ատեն մը այնչափ ծաղկած ու հիմայ այսպիս նուազելու և որ աւուր փճանալու վրայ եղած հայ գաղթականութիւնը, գոնե գրով ու պատգայ սերունդներուն համար ըլլայ յիշատակ մը, թէ ժամանակը մը Հայաքաղաղաք (Արտեոպոլիս) կոչուած տեղոյն վրայ, միայն աղջայինք կը բնակին եղեր. որոնք՝ իրենց հեղինակութեամբը, մեծ աղջեցութիւն ունեցած են, շրջակայ աղջայնութեանց վրայ — որոնք՝ իրենց ձեռնարկու ոգուով կը կարողութեամբը, գործունեութեամբը, շրջահայեցութեամբը, առետրական աշխատութիւնը ու հարբատութեամբը՝ մեծ բաներ ըրած, շատ բան թուցած գուցած են իրենց սերնդոց: —

Ցաւալի գուշակութիւն մըն է, զոր ընել կը հարկագրինք: Եւ երանի թէ չիրականանար ըստածնիս, Բայց պարագաներն ու յարաբերութիւնները, և անցելոյն՝ ներկային հետ համեմատութիւնը, զմեզ գրեթէ կ'ապահովցնեն, թէ զար մը պիտի չանցնի ու պիտ՝ որ անհետանայ, նաև Դրանսիլուանից Հայոց այս մայրաքաղաքին մէջէն հայութեան ոգին, հայ լեզուն, սովորութիւնները . . . և գուցէ հայ արարողութիւնը, եթէ որ արտաքոյ կարգի պատահար մը, վերջին գիտուած մը — թերեւ աղջային եպիսկոպոսութեան վերականցնումը, և կամ ուրիշ տեղէ մեծ գաղթականութիւնը մը — այս տեղույն օգուութեան համարի: — — —

Մատենիս նկարագրութիւնն աւելի աչքի զարնող ու ձեռքով շշափելի ընելու համար զանիկայ պատկերազարդ ըրած ենք, ամփոփելով անոր մէջ չէ թէ միայն քաղքիս կրկին թռչնահայեաց պատկերը, այլ նաև հրապարակական շնկերուն, հիմնարկութիւններուն, եկեղեցիներուն, պարտէզներուն և այլն՝ աւելի նշանաւոր կտորները: Բաց առկէ ժողովրդեան այլեայլ աստիճանէն՝ զանազան անձանց լուսանկար պատկերներն ալ գործոյս մէջ առած ենք:

Պէտք ենք խոստովանիլ, թէ մեծ քաջալերութիւն մատուցած է մեղի՝ յանձն առնելու գործոց թէ մատարական աշխատութիւնը, և թէ մանաւանդ նիւթական ծափքերն այն ճանաչողաթիւնն ու երախտագիտութիւնը՝ որուն արժանացած ենք մեծապատիւ Խզմիրեան կտակին վերատեսչութեան կողմանէ, երբ երկու տարի յառաջ նմանօրինակ գործք մը — Հայք յեղիսաբեթուպոլիս Դրանսիլուանիոյ: — Հրատարակելու ձեռք զարկած եինք:

Եւ այս է երկրորդ պատճառն, որուն համար փափաքեցանք՝ աղջիս մէկ քիչ ծանօթ գաղթականութեան վրայէն նորէն մոռացութեան քող

վերցնել և զանիկայ ընդհանուր աղքին, գոնէ ըստ մասին ծանօթացնել:

Հարկաւ ցանկալի կըլինէր մեզ համար, որ հեղինակն իւր նիւթերի մէջ աւելի ընտրութիւն արած լինէր և աւելի լուրջ ոճով զբէր՝ խռոսափելով աւելորդ ածականներից, աննշանակ մակդիրներից և պարզամիտ (ուայ) նկարագիրներից. սակայն ոճը նոյն իսկ մարդն է: չպահանջնենք անհնարինը, շատերի համար գուցէ այս պարզութիւնս իսկ զբքիս հրապոյրներից մէկն համարուի: Այս գիրքը կարող ենք ստարութեան մէջ կեանուղ հայութեան յուշարձանն համարել, նկեղեցիների անխարութիւն քառողաղները թող այս օրինակովս էլ տեսնեն, որ արտաքոյ հայաստանեայց եկեղեցու շիք փրկութիւն հայութեան:

Ա. Կարրիե. La Légende D'Abgar dans l'histoire d'Arménie de Moïse de Khoren. Paris 1895. Impr. nationale. եր. 357—414.

Կար ժամանակ, երբ Փրանսիական արևելագէտներն անընդհատ շարքերով հայկական գրականութեան ուսումնասիրութիւններ էին ընծայում, սակայն վաղուց է, որ այդ եռանդուն գործունէութիւնը գաղարել է: Փարիզու արևելեան կենդանի լեզուների վարժարանից ուսուցչապետ պ. Ա. Կարրիեն է միայն, որ իւր այլ պարապմունքներից աւելացած ժամանակը նուիրում է հայկական գրականութեան: Յարդելի գիտնականի այս աշխատութիւնը պարտական ենք «արևելեան կենդանի լեզուների վարժարանի» հարիւրամեակին, որի յիշատակին եղած հրատարակութեան մի մասն է կազմում այս շքեղ մենագրութիւնը:

Հայ բանասէրներին յայտնի է, որ Գուտշմիդից սկսած եւրոպական բանասէրների մի մասն մինչև ցայսօր ճգնում են ցոյց տալ, թէ հայ պատմութեան նախահայր Մ. Խորենացին և, գարու մատենագիր չէ, Յարդելի փրանսիական գիտնական պ. Ա. Կարրիերն Մ. Խորենացու մասին այս երրորդ շարադրութիւնն է ահաւ, որ հրատարակում է: բարեբախտարար այդ շահագրգիռ հետաքննութիւններն ամենքն էլ հայերէն են թարգմանուած և այս երրորդն ևս թարգմանուում է: Նախկին երկու շարադրութեանց մասին թեր և դէմ առարկութիւններ ևս եղած են. անշուշտ այս վերջին հմտալից քննսագատութիւնն ևս առարկութիւններ յառաջ կը բերէ: Պ. Ա. Կարրիերը հիմնուելով իւր նախկին և ներկայ հետազոտութեանց վրայ՝ պնդում է՝ թէ Մ. Խորենացին ութերորդ գարուց առաջ չէր կարող զբէր իւր պատմութիւնն և յոյս ունի,

որ շուտով պիտի՝ յաջողի նորանոր աղբիւրների միջոցով ցոյց տալու մերձաւորապէս այն որոշ ժամանակամիջոցը, երբ գրուած է «Հայոց պատմութիւնը»:

Առաջիկայ աշխատութեանս մէջ յարգելի գիտնականը ձեռնարկել է Խորենացու գործ դրած աղբիւրների քննութեան և ճգնել է ցոյց տալ այն եղանակը, որով Խորենացին օգտուում էր իւր աղբիւրներից: Հետազոտութեանս նպատակին է մատնանիշ անել այն ազատութեան վրայ: որով Խորենացին վարուում էր իւր աղբիւրների հետ, ցոյց տալ այն հարուստ երևակայութիւնը, որով երբեմն Մովսէս ընդարձակում էր իւր աղբիւրներն և վերջապէս ուշագրութիւն հրաւիրել նրա այն եռանդի վրայ, որով նա ամենայն ինչ հայ ացնում էր և մտցնում հայոց պատմութեան մէջ, որ ամենեին կապ չունէր հայկական պատմութեան հետ: Այս առաջադրութիւններն հաստատելու համար պարրիերն ասնում է «Հայոց պատմութեան Բ. Գրիլ Ի. Ֆ. լ. Զ. գլխաները ուր պատմուած են Արշամի, Երգարի, Անանունի և Սանատրուկի պատմութիւնները»:

Ամրող քննագատութիւնն աշքէ անցնելով՝ պիտի խոստովանենք, որ հեղինակիս այս հետազոտութիւնն աւելի լուրջ տպաւորութիւն է գործում մեզ վերայ, քան թէ նախկինները, սակայն միանգամայն ստիպուած ենք ասելու, որ գլխաւոր սկզբաւուներն և մասնական քննութիւններից շատերն արգելն իսկ յայտնի էին: Գուտշմիդը իւր նշանաւոր քննագատութեան մէջ այն եղբակացութեան էր հասել, որ «Խորենացին երբէք չէ ստում և որ նրա աւանդած ամէն մի դէպքը հիմնուած է որևէ ստոյդ պատմական անցքի վրայ»: այս նշյնը աւելի մեծ շափով ցուցել է և պ. Ա. Կարրիերը, Արշամի մատացածին լինելի, Երգարու և Անանունի պատմութեան բոլոր աղերսները «Հայոց պատմութեան» հետ արգէն իսկ բացարձել էր Գուտշմիդը իւր «Աւահայի թագաւորութեան» պատմութեան մէջ, որ յարդելի գիտնականն էլ յիշատակում է: թէպէտ ոչ ամենուրեք, Երգարու թղթի հայերէն թարգմանութեան միջոցին հայացնելու ինդիրն իսկ արգէն պարզուած էր հ. Ալիշանի հրատարակութեան մէջ, թէպէտ գիտնական հրատարակին այդ կարծիքին ինքն հակակառակ է: Յամենայն գէպս գեռ պարզուած չէ այն ինդիրը՝ թէ ոչ է այդ թղթի թարգմանին ու հայացնողն, որպէս զի հնար ունենանք նրա և Խորենացու յարաբերութիւններն որոշել:

Հետազոտութեանս մէջ նոր են այն փաստերը, որոնցով պարզուցել է ճգնած՝ թէ Մովսէսը Յուլիոս Ավրիկանոսի գործը ճանաչել է միայն Եւսեբիոսից և Յովելիոսի գործերից օգտուել է մի-